ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբեր 2011թ. թիվ 32-Ա

ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16 հոդվածի 1-մասով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 2 մասի 2 կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2012 թվականի փետրվարի 12-ին համայնքի ղեկավարի ընտրությունների կապակցությանբ Խաշթառակ համայնքում ստեղծել համայնքային ընտրական տեղամասային կենտրոն և այն կազմավորել համայնքի միջնակարգ դպրոցում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Խաշթառակ համայնքի ղեկավար Հ.Քամալյան

ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբեր 2011թ. թիվ 33-Ա

«ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ եմ

1. Խաշթառակ համայնքի ղեկավարի ընտրություններին մասնակցող թեկնածուների քարոզչական պաստառները փակցնելու համար Խաշթառակ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը:

1. հրապարակ թիվ 1/1 6քառ.մ.
2. 16 փողոց թիվ 2 20քառ.մ.
3. 13 փողոց թիվ1/1 5քառ.մ.

2.Սույն որոշման օրինակն ուղարկել կենտրոնական ընտրական հանձնաժողով

Խաշթառակ համայնքի ղեկավար Հ.Քամալյան

ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբեր 2011թ. թիվ 34-Ա

ԽԱՇԹԱՌԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ՝ ԹՈՌՆԻԿ ԷԴԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաշթառակ համայնքի ավագանու 10.12.2010թ. թիվ 9 նիստի թիվ 30 որոշումը

Հաշվի առնելով Թոռնիկ էդիկի Վիրաբյանի տատի՝ Զիրավարդ Սուրենի Վիրաբյանի մահը :

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

Խաշթառակ համայնքի 2011թ. բյուջեով նախատեսված 4726 հոդվածի 10-3-1 հատվածից տալ միանվագ դրամական օգնություն

1. Թոռնիկ Վիրաբյանին 30000 /երեսուն հազար/ դրամ հուղարկավորության նպաստ

Խաշթառակ համայնքի ղեկավար Հ.Քամալյան